



ՀԱԻԱՏՔԻ ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱՄԱՐՉԱԿՈՒԹԻՒՆԸ



Հ. Դ

692

Ն. 2 - 8

ՀԱՒԱՏՔԻ ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱՄԱՐՁԱՎՈՒԹԻՒՆԸ

1960

Քրիստոնէին հաւատքը անտեսանելի բանի մը վրայ՝ զարմանք կը պատճառէ անհաւատին, ու յաճախ առարկայ է ծաղրանքի և արհամարհանքի: Աշխարհասէրը՝ տկարամտութեան իւր ապացոյց մը կը նկատէ Քրիստոնէին միամիտ հաւատքը, և՛ ի մտի ունենալով իր խնայական գերազանցութիւնը՝ քաղցր քմիծաղով մը կը յայտարարէ թէ ինչը երբէք չի հաւատար բանի մը՝ առանց ստոյգ ապացոյցի. թէ ինչը երբէք փութապէս չ'ընդունիր եղբակացութիւններ, և չի հաւատար բանի մը զոր չէ կարող տեսնել կամ հասկնալ:

Այն խօսքը թէ՛ իր չհասկցած բաներուն չհաւատացող մարդը շատ համառօտ հաւատոյ հանգանակ մը պիտի ունենայ, այնքան ճիշդ է որքան հինցած: Չկայ ապրող իմաստասէր մը որ կարենայ հասկնալ մէկ-հարիւրերորդ մասը պարզ երեւոյթի մը զոր կը տեսնէ ամէն օր: Գիտունք՝ զննողութեամբ գտեր են որ հողի ինչ ինչ տեսակներ յարմար են ինչ ինչ տեսակ արտադրութեանց. սակայն ոչ մէկը կրնայ ըսել ինչո՞ւ: Անոնք գիտեն թէ՛ ինչ ինչ պայմաններու մէջ կրնանք անձրև կամ ձիւն սպասել. բայց չեն կարող արտադրել այն պայմաններն, ոչ ալ ըսել ի՞նչպէս կը դոյնան առանձնաբէ: Արդարև, բոլոր այն երեւոյթներէն՝ որոնց վրայ այնքան դիտնօրէն կը վիճին իմաստասէրք, չկայ հատ մը՝ որուն վերջին պատճառն անոնք կարենան բացատրել:

The Full Assurance of Faith. - Armenian.



692-2014

14694

Իրողութիւնն այն է թէ՛ հաւատքը մին է ա-
մենաստվորական բաներէն։ Զկայ սկեպտիկ մը՝ որ
հաւատք չունենայ աւելի կամ նուազ չափով մը .
ու բազմաթիւ պարագայից մէջ՝ անոնք աւելի՛
խակ առաջ կ'երթան, միամիտ դիւրահաւանութիւն
ցոյց տալով։ Սակայն հաւատքի տարրը հիմը կը
կազմէ բոլոր առեւտրական գործառնութեանց,
և կեանքի ամէն զբաղմանց։ Երկու մարդ ժամա-
դիր կ'ըլլան այս ինչ ատեն և այն ինչ տեղ, գործ
մ'ընելու համար . իւրաքանչիւրը պէտք է վստահի
միւսին խօսքին։ Վաճառականը պէտք է հաւատք
ունենայ իր պաշտօնէից և յաճախորդաց վրայ։
Այո, աւելի՛ եւս, ան՝ պէտք է, թէպէտ անգի-
տակցօրէն, հաւատք ունենայ առ Աստուած . քան-
զի իր նաւերը հեռաւոր տեղեր պիտի ղրկէ, այն
վստահութեամբ թէ անոնք պիտի վերադառնան
վաճառքով բեռնաւորեալ, և սակայն ինքը պէտք
է գիտնայ որ անոնց ապահով վերադարձը կախ-
է գիտնայ որ անոնց ապահով վերադարձը կախ-
ուած է հովերէն և ալիքներէն, զոր զսպել մարդ-
ուած է հովերէն և ալիքներէն, զոր զսպել մարդ-
կային կարողութենէն վեր է։ Ու թէև անգամ
մի՛խն չխորհի բնաւ տարրերը զսպող Զօրութեան,
ան կը վստահի սպայից և նաւաստեաց։ Պիտի մին-
չև իսկ ինքզինքն յանձնէ նաւերէն միոյն, որուն
նաւապետն ու նաւաստիները չէ տեսնել բնաւ, և
վստահաբար պիտի յուսայ ապահովութեամբ փո-
խադրելի երթալիք նաւահանգիստը։
Այս մարդիկներէն մին՝ որ կը կարծէ թէ յի-
մարական է վստահիլ Աստուծոյ մը՝ «զոր մարդոց-
մէ մէկը չտեսաւ, ոչ ալ տեսնելու կարող է,»
պզտիկ պատուհանի մը քով պիտի երթայ, ու իր
դրամը հոն ձգելով՝ փոխարէն պիտի ստանայ մար-
դէ մը զոր բնաւ չէ տեսնել առաջուց, և որուն

անունը չի գիտեր, լո՛կ թղթի փոքր կտոր մը որ
կ'ըսէ թէ ինքն իրաւունք ունի հեռաւոր քաղաք
մը ճամբորդելու։ Ան բնաւ չէ տեսնել թերեւս այդ
քաղաքն, ու անոր գոյութեանը մասին ուրիշներէ
միայն տեղեկացեր է, բայց և այնպէս՝ չողեկառք
կը մտնէ, իր թղթի կտորը կուտայ ուրիշ բոլորո-
վին անձանթի մը, ու հանգիստ մը կը նստի։
Երբէք չէ տեսած մեքենավարը, ու միայն գիտէ
թէ՛ ան կրնայ անկարող և նենգամիտ մէկն ըլլալ .
բայց և այնպէս՝ ինքը կատարելապէս անտարբեր
է, և վստահաբար կը յուսայ ապահով հասնիլ իր
տեղն՝ որուն գոյութիւնը ի լրոյ միայն իմացեր է։
Աւելի՛ն կայ . ան իր ձեռքն ունի թղթի կտոր մը՝
պատրաստուած ինչ ինչ մարդոցմէ զոր բնաւ չէ
տեսնել, որ կը յայտարարէ թէ՛ այդ օտարական-
ները որոնց խնամքին յանձնել է ինքզինքը, պիտի
իր տեղն հանեն զինքը որոշեալ ժամու մը . ու այս
սկեպտիկն այնքան վստահօրէն կը հաւատայ այդ
յայտարարութեան, որ լուր կը ղրկէ ուրիշ անձի
մը զոր բնաւ չէ տեսնել, որպէս զի կարգադրու-
թիւններ ընէ՝ դիմաւորելու համար զինքն այդ ո-
րոշեալ ժամուն։

Բաց աստի՛ անոր հաւատքը կը խմբագրուի՝
իր գալուստը ծանուցանող լուրին ուղարկմամբ։
Ան պզտիկ սենեակ մը կը մտնէ, մէկ քանի բառ
կը գրէ թղթի կտորի մը վրայ, զոր կուտայ փոքր
մեքենայի մը մօտը նստող օտարականի մը, իր
դրամը կը վճարէ մարդուն, ու ապա իր ճամբան
կը շարունակէ, հաւատալով թէ կէս ժամ չանցած՝
մղոններով հեռու գտնուող իր անձանթը բարեկա-
մը պիտի կարդայ հեռագիրը զոր ինքն իր ետեւը
գտնուող կայարանը ձգել էր։

Քաղաք հասնելուն՝ անոր հաւատքն աւելի կը յայտնուի: Շոգեկառքին մէջ եղած միջոցին՝ նամակ մըն է գրեր իր ընտանիքին զոր տունը թողած է: Քաղաքն հասնելուն պէս՝ փողոցի մը մէջ կը նշմարէ տեղ մը հաստատուած երկաթէ պզտիկ տուփ մը, ու անմիջապէս երթալով իր նամակը կը ձգէ անոր մէջ, ու կը մեկնի անկասկած: Ան վստահաբար կը յուսայ որ՝ նամակը զոր այդ տուփը ձգեր էր՝ առանց մէկու մը բառ մ'ըսելու, իր կնոջը ձեռքը պիտի հասնի երկու օրէն: Եւ սակայն այս մարդը կը կարծէ թէ վերին աստիճան յիմաբական է խօսիլ Աստուծոյ՝ այն ակնկալութեամբ թէ Ան պիտի ու է է ուշադրութիւն ընծայէ խօսքերու:

Բայց սկեպտիկն այս ամէնուն պիտի պատահաւորանէ թէ ինքը կուրօրէն չի վստահիր այլոց, այլ թէ պահառու ունի հաւատարու թէ իր հեռագրալուրը պիտի ճշդիւ ղրկուի, և թէ իր նամակը պիտի իր կնոջը ձեռքն հասնի ճիշդ ատենին: Այս բաներուն նկատմամբ իր հաւատքը հիմնուած է հետազայ փաստերուն վրայ:—

1. Այլք ապահովութեամբ փոխադրուեր են, ու հազարաւոր նամակներ և հեռագիրներ ճշդիւ ղրկուեր՝ և փութով իրենց տեղերն յանձնուեր են: Ամէն անգամ որ նամակ մը իր տեղը չէ հասեր, յանցանքը գրեթէ միշտ ղրկողին քովն է եղած:

2. Այն մարդիկներն՝ որոնց կը վստահի ինքզինքն ու իր լուրերը՝ մարդ և լուր տանելու գործը կ'ընեն. եթէ անոնք թերանային իրենց համաձայնութիւնները կատարելու, ոչ ոք պիտի անոնց վստահէր, և իրենց գործը պիտի չուտով աւրուէր:

3. Ինքը տիրող իշխանութեան ապահովու-

թիւնն ունի: Երկաթուղւոյ և ապահովագրական ընկերութիւնք՝ իրենց արտօնագիրը կը ստանան կառավարութենէն, որ անով մասամբ մը պատահաւորապէս կը դառնայ անոնց հաւատարմութեան համար: Եթէ անոնք իրենց համաձայնութեան համեմատ չվարուին, կառավարութիւնը կրնայ հտառնել անոնց արտօնագիրը: Նամակատուփին վրայ իր վստահութիւնը վերագրելի էր այն իրողութեան թէ՛ ինքն անոր վրայ տեսաւ սկզբնատուր՝ ու հասկցաւ որ անոնք կը նշանակեն թէ կառավարութիւնը վստահեցուցեր է ապահովապէս իր տեղն յանձնել նամակատուփը ձգուած ու է նամակ, պայմանաւ որ հասցէն ճիշդ գրուած և գրուած ըլլայ: Ան կը հաւատայ որ կառավարութիւնը պիտի գործադրէ իր խոստումները, քանզի՝ եթէ զայդ չընէ, պէտք է չուտով վերջ գտնէ: Անոր զոյլութիւնը կախուած է իր խոստումները կատարելու իր կարողութենէն, ու զանոնք գործադրելու մէջ իր ուղղամտութենէն: Այնքան ի շահ կառավարութեան է իր խոստումները կատարելն՝ որքան ի շահ երկաթուղւոյ և հեռագրական ընկերութեանց է իրենցներն իրագործել: Ու այս բոլոր բաներն հաստատուն հիմ մը կը կազմեն իր հաւատքին համար:

Լա՛ւ՝ սակայն Քրիստոնեան հազարապատիկ աւելի՛ փաստ ունի Աստուծոյ խոստումներուն մասին իր հաւատքին համար: Հաւատքը ըստածը կոյր զիւրահաւանութիւն չէ: Առաքեալը կ'ըսէ, «Արդ հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը, և չերեւցած բաներուն ապացոյցն է» (Եբր. ԺԱ. 1): Ասի ներշնչեալ սահմանում մ'է, և ուստի կրնանք եզրակացնել թէ Տէրը մեզմէ չա-

կրնկալեր հաւատք ունենալ՝ եթէ ոչ ստոյգ ապացոյցի վրայ: Արդ՝ իսկոյն կրնայ ցոյց տրուիլ որ Քրիստոնեան չա՛տ աւելի պատճառ ունի իր հաւատալուն համար Աստուծոյ՝ քան սկեպտիկն ունի իր վստահութեանն համար երկաթուղւոյ և հեռագրական ընկերութեանց կամ կառավարութեան վրայ:

1. Այլք վստահեր են Աստուծոյ խոստմունքներուն, և ստոյգ գտեր զանոնք: Երբայեւոց թղթոյն տաանումէ կերորդ գլուխը կը պարունակէ երկար ցանկ մը Աստուծոյ խոստմունքները ստուգողներուն. «որոնք հաւատքով թաղաւորութիւններու յաղթեցին, արդարութիւն գործեցին, կրակի զօրութիւն մարեցին, սուրի բերնէ ազատեցան, տկարութենէ ուժովցան, պատերազմի մէջ զօրաւոր եղան, օտարներու բանակներ ցրուեցին, կնիկներ իրենց մեռելները ընդունեցան յարութիւն առած:» Ուզողը կրնայ գտնել բազմաթիւ փաստեր այն իրողութեան թէ՛ Աստուած «նեղութիւններու մէջ խիստ օգնական կը գտնուի:» Հազարաւորներ կրնան վկայել պատասխանուած աղօթքներու մասին այնպիսի՝ ակներե կերպով մը որ այլեւս տարակոյս չկնայ թէ Աստուած կը պատասխանէ աղօթքներու՝ քան թէ կառավարութիւնը կը փոխադրէ իրեն յանձնուած նամակաց ծրարը:

2. Այն Աստուածը որուն կը յուսանք՝ աղօթքներու կը պատասխանէ և իր ծառաները կը պաշտպանէ և կը հոգայ: «Տէրջը ողորմութիւններէն է որ չհատանք, վասն զի Անոր գլխութիւնը չպակեցաւ» (Ողբք Գ. 22): Ան «ողորմութիւնը կը սիրէ» (Միք. Է. 18): «Քանզի Սո Զեր վրայօք խորհած խորհուրդներս գիտեմ՝ կ'ըսէ Տէրը, անոնք Զեր յուսացած վախճանը Զեզի տալու

համար՝ խաղաղութեան խորհուրդներ են և ոչ թէ չարիքի» (Երեմ. Իթ. 11): Եթէ Ան իր խոստմունքներէն մին դրժէր, մարդիկ պիտի դադրէին Անոր հաւատալէ: Այս էր Դաւիթի վստահութեան հիմը: Ան ըսաւ, «Քու անուանդ փառքին համար օգնէ՛ մեզի ո՛վ մեր փրկութեան Աստուածը. և Քու անուանդ համար փրկէ՛ մեզ ու մեր մեղքերը քաւէ՛: Ինչո՞ւ Հեթանոսները ըսեն թէ՛ ո՞ր է անոնց Աստուածը (Սաղմ. Հիթ. 9, 10):

3. Աստուծոյ կառավարութեան գոյութիւնը կախուած է իր խոստմունքներուն կատարումէն: Քրիստոնեան տիեզերքին կառավարութեանը խոստմունքն ունի թէ՛ իւրաքանչիւր օրինաւոր խնդրանք զոր կ'ընէ՝ պիտի չնորսուի իրեն: Կառավարութիւնք մասնաւորապէս տկարներուն պաշտպանութեանն համար են: Հիմա ենթադրէ՛ որ Աստուած թերանար կատարելու մին իր խոստմունքներէն՝ աշխարհի մէջ ամենատկար և ամենաանշան անձի մը. այդ միակ թերութիւնը պիտի կործանէր Աստուծոյ բովանդակ կառավարութիւնը... Համօրէն տիեզերքը պիտի խառնակութիւն դառնար յանկարծ... Եթէ Աստուած դրժէր իր խոստմունքներէն մին, տիեզերքին մէջ ոչ ոք կրնար երբէք վստահիլ անոնց, ու Անոր իշխանութիւնը պիտի վերջանար... քանզի՛ տիրող իշխանութեանց վրայ վստահութիւնն է միակ ստոյգ հիմն հնազանդութեան: Ռուսիոյ Ոչնչականները չեն հնազանդիր Չարին, քանզի չեն վստահիր անոր: Ո և է կառավարութիւն՝ որ, թերանալով իր պարտականութեանց մէջ՝ կը կորսնցնէ իր հպատակներուն յարգանքը, անկայուն կացութեան մէջ կը գտնուի: Ուստի արուպ Քրիստոնեան կը վստահի Աստուծոյ

խօսքին, գիտնալով որ Աստուած աւելի՛ ի վտանգի է քան ինքը: Եթէ հնարաւոր բան մ'ըլլար Աստուծոյ՝ դրժել իր խօսքը, Քրիստոնեան պիտի միայն իր կեանքը կորսնցնէր, բայց Աստուած պիտի կորսնցնէր իր նկարագիրը, իր կառավարութեան հաստատութիւնը և տիեզերքին իշխանութիւնը:

Ասկէց զատ՝ անոնք որ իրենց վստահութիւնը կը դնեն կառավարութեան, կամ մարդկային ունէ մէկ օրէնքին վրայ, հակամէտ են յուսախաբ ըլլալու: Դիտաւորութեանց լաւագոյններն ունենալով հանդերձ՝ սխալմունքներ պիտի գործուին, քանզի սխալական են մարդիկ: Սակայն Քրիստոնէին սա հաստատ խոստմունքն է տրուած, «Իօրայէլի Աստուծոյն պէս չկայ. Ան քեզի օգնութիւն ընելու համար, իր մեծ վայելչութեամբը երկինքներու և ամպերու վրայ կը նստի: Յաւիտենական Աստուածը քեզի ապաւէն է, ու Անոր յաւիտենական բազումները քեզի պաշտպան են» (Բ Թր. ԼԳ. 26, 27): Անոր զօրութիւնը կ'երեւայ արարչութեան մէջ: Անոր ստեղծած բաները իր յաւիտենական զօրութիւնն ու Աստուածութիւնը կը վկայեն: Ո՛րչափ աւելի հզօր ըլլայ կառավարութիւն մը, ա՛յնչափ աւելի մեծ կ'ըլլայ վստահութիւնն՝ անոր վրայ: Ուստի ի՜նչ աւելի բանաւոր քան մեր անսահման վստահութիւնն ունենալն այն Աստուծոյն վրայ՝ որուն ամենակարող, յաւիտենական և անփոփոխ ըլլալը կը յայտարարեն ընութիւն և յայանութիւն միաբան:

Եթէ անհաւատի մը յայանելի՝ իր բարեկամներէն միոյն անկեղծութեանը մասին անուցած տաւակոյտներս, ան պիտի ըսէր, «Զինքը չը ճանչնա-

լուդ է որ կը տարակուսիս կոր, հեղ մը փորձէ՛ գինքն՝ ու պիտի տեսնես ո՛րքան անկեղծ է ան:» Ասի ուղիղ պատասխան մը պիտի ըլլար. ու ա՛յսպէս կըսենք և մենք այն անհաւատին՝ որ կը տարակուսի Աստուծոյ խոստմունքներէն, «Յաշակեցէ՛ք ու տեսէ՛ք որ Տէրը բարի է... Անկէ վախցողներուն բան մը պակաս չըլլար» (Սաղմ: ԼԳ. 8, 9): Ի՜նչ իրաւունք ունի մէկը տարակուսելու Աստուծոյ խոստմունքներէն, կամ զօրութիւնէն՝ լաւ մը չը փորձած զանոնք... Ու այդ պարագային մէջ՝ ինչ իրաւունք ունի մէկը տարակուսելու Աստուծոյ, բայտ որում ամէն ոք կը փորձէ կոր Անոր զօրութիւնն ու ողորմութիւնը՝ իր կեանքին մէջ մէն մի վայրկեան...:

Երկրորդ կորնթացեաց առաջին գլխուն 18-20 համարներուն մէջ՝ հետեւեալ բացարձակ յայտարարութիւնները կը գտնենք, «Սակայն հաւատարիմ է Աստուած, որ մեր խօսքը ձեզի որ հասաւ, այո և ոչ չէր: Քանզի Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս՝ որ մեզմով ձեզի քարոզուեցաւ (ինձմով և Սիղուանոսով ու Տիմոթէոսով), այո և ոչ չեղաւ, հապա իր մէջը եղաւ այոն. քանզի որչափ որ Աստուծոյ խոստմունքները կան, իր մէջը այո են, ու իր մէջը ամէն են՝ Աստուծոյ փառքին համար մեր ձեռքով:»

Այս իրողութեամբ է միայն որ մեղաւորը կրնայ Աստուծոյ մօտենալով վստահութիւն գտնել: «Յիսուս Քրիստոս՝ նոյնն է երէկ, այսօր և յաւիտեան», — այս է մեղաւորին միակ յոյսը: Զանոնք կշտամբելու, կամ զիրենք յուսախաբ ընելով պանծալու համար չէ որ հետեւեալ շնորհալի կոչը եղած է մարդոց, «Ո՛վ բոլոր ծարուածներ՝ ջուրե-

րո՛ւն եկէք. և ստակ չունեցողներ՝ եկէ՛ք, ծախո՛ւ առէք և կերէ՛ք. եկէ՛ք առանց ստակի և գնոյ զինի ու կաթ ծախու առէք» (Ես. ԾԵ. 1):

Յիսուս կ'ըսէ, «Ան որ Ինծի կուգայ բնաւ չուրս պիտի չհանեմ» (Յով, 2. 37). ու Պօղոս կ'ըսէ թէ՝ «Ան կարող է բոլորովին փրկել զանոնք որ Իրմով Աստուծոյ կուգան (Եբր. Է. 25): Ու միեւնոյն առաքեալը կ'ըսէ նաև. —

Արդ մեկն որ մեծ Քահանայապետ մը ունիմք՝ երկինքը անցած, Յիսուսը՝ Աստուծոյ Որդին, ամուր բռնեմք մեր դաւանութիւնը: Քանզի չե՛ք թե այնպիսի Քահանայապետ մը ունիմք՝ որ կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալու, այլ՝ Ինքը ամեն կերպով փորձուած է մեզի նման, բայց առանց մեղքի: Ուսի ա՛յ հաւատարմութիւնով մօտեանք շնորհաց արքունի առջեւ, որպէս զի ողորմութիւն ընդունիմք, ու շնորհք գտնեմք պէտք եղած ասեւր մեզի օգնելու» (Եբր. Դ. 14-16):

Դարձեալ՝ կը կարդանք, «Բայց առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ. վասն զի ան որ Աստուծոյ կը մօտենայ, պէտք է հաւատայ թէ Աստուած կայ, և թէ վարձահատոյց կ'ըլլայ անոնց որ զինքը կը վնասեն» (Եբր. ԺԱ. 6): Ուրեմն՝ հաւատք և համարձակութիւն յատկանշիներ են՝ զոր Աստուած կ'ուզէ որ Իրեն եկողները ցոյց տան: Այս խորհրդածութիւնները թելադրեց ընթերցումը հին երգի մը՝ որուն առաջին երեք տուներն են հետեւեալները. —

«Հե՛ք մեղաւոր, չարչարուած բի՛ւր Հոգեւոր անպատում...»

Յանցանքներովդ, վախովդ՝ եկո՛ւր Տալ սա հուսկ որոշում. —

«Թե՛ւ մեղքերս շուրջս եմ պատեր Բարձրաբերձ լեռանց պէս.

Այլ զիտեմ ո՛ւր է քաղցր իմ Տէր, Պի՛ս՝ Իրեն դիմեմ ես.

«Խոստովանիմ պի՛ս՝ յանցանքներս Իր առջին՝ գեցնամս.

Պի՛ս՝ ըսեմ քե՛ք քրեւաւ մ'եմ ես Առանց Իր շքանշանց:»

Այդ աղէ՛կ, լաւագոյն որոշում մ'ընել հնար չէր թերեւ: Ճի՛շդ այս է ինչ որ Աստուած կ'ուզէ որ ընէ իւրաքանչիւր մեղաւոր: Ան կ'ըսէ. —

«Տէրը փնտեցե՛ք, քանի որ Անկիւս կը գտնուի, զԱնկիւս կանչեցե՛ք, քանի որ Անկիւս մօտ է: Թող անբարիչքը իր ճանքայե՛ն՝ ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի ու Տէրոջը դառնայ, ու Անկիւս պիտի ողորմի անոր. ու մեր Աստուծոյն, քանզի անկիւս առասպալես կը ներէ» (Ես. ԾԵ. 6, 7):

Այս է ստոյգ խոստմունքին լեզուն: Ինչ ըսենք ուրեմն վերոյիշեալ երգին չորրորդ տունին մէջ արտայայտուած զգացման. —

«Թերեւս լրսէ՛ հառաչալիք

Ձերմեռանդ աղօթքն իմ.

Բայց եթէ ա՛յս ես մեռնիմ՝ Իր

Առջի՛ն քող լոկ մեռնիմ...»

Այսպիսի լեզու մը կրնար ներկի ըլլալ՝ մէկու մը որ ոչինչ գիտէր Աստուծոյ մասին. բայց եթէ

արտաբերուէր մէկէ մը որ ճանչցեր է զԱստուած, կամ, մանաւանդ, ճանչցուեր է Անկէ, անոր խօսքին վրայ նախատինք բերող մը միայն կրնայ նշկատուիլ: Մեղաւորն յորդորուած է Աստուծոյ առջև նետուիլ գետնամած, իր մեղքերը խոստովանիլ, ու Անոր զթուփիւնն հայցել, ու ապա կը «քաջալերուի» այն մտածումով թէ քերեւս Աստուած պիտի լսէ իր աղօթքն, ու ընդունի իր աղաչանքը: Այդ կերպով չէ որ Ան կը քաջալերէ մեղքով ախտացեալները: Սիրելի աշակերտը կ'ըսէ, «Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ և արդար է Անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու, և մեզ բոլոր անիրաւութենէ՝ սրբելու» (Ա. Յովհ. Ա. 9): Ան կը խոստանայ որ «պիտի ողորմի» և «առատապէս ներէ» անոնց որ իրեն կը դառնան խոստովանելով, և մոռնալով, իրենց մեղքերը:

Աստուծոյ քով «թերեւս» չկայ: Անոր խոստմունքներն՝ Ապաշխարող մեղաւորներուն, ու իր սպառնալիքներն՝ անդէշներուն ուղղուած, հաւասարապէս ստոյգ են: «Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի. և ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի» (Մարկ. ԺԶ. 16): Մոլորեալին կ'ըսէ, «Այն ատեն ինծի պիտի կանչէք, ու պիտի երթաք և պիտի աղօթէք ինծի, ու ձեզի պիտի շնորհ. որ զիս պիտի փնտռէք ու պիտի գտնէք, երբ ձեր բոլոր սրտովը փնտռէք զիս» (Երեմ. ԻԹ. 12, 13): Ան նորէն կ'ըսէ, «Յակոբին սերունդին չըսի թէ՝ Զուր տեղը զիս փնտռեցէք. Ես Տէրս արդարութիւն կը խօսիմ, և ճշմարիտ բաներ կը յայտնեմ» (ԵՍ. ԽԵ. 19):

Քրիստոս կ'ըսէ, «Եկէ՛ք ինծի՝ բոլոր յոգնած ու բռնաւորուածներ, և Ես ձեզ պիտի հանգչեմ»:

ցընեմ: Իմ լուծս ձեր վրայ առէք, և Ինծմէ սորվեցէ՛ք՝ որ հեղ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձերուն հաւգտութիւն պիտի գտնեմ» (Մատթ. ԺԱ. 28, 29): Այս մասին «թերեւս» չկայ:

«Աստուած սէր է»: Ան ինքզինքն յայտնեց է մեզի իբրև Աստուած մը որ «ողորմութիւնը կը սիրէ»: Ասոր ստուգութիւնը կը գտնուի այն իրողութեան մէջ թէ՛ Յիսուս մեռաւ մեզի համար: «Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝ յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ» (Հռովմ. Ե: 8): Ու «Ան որ իր Որդւոյն յինայեց, հապա մեր ամենուս համար մատնեց զԱնիկա, ալ ի՞նչպէս Անոր հետ ամէն բաները միգի չի պարգեւեր» (Հռովմ. Ը: 32): «Այս խօսքը ճշմարիտ է, և բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու» (Ա. Տիմ. Ա. 15): Ըստ որում Ան այս բացայայտ նպատակին համար եկաւ, ինչպէս կրնայ ու և է տարակոյտ ըլլալ իր ընդունելուն մասին զանոնք որ իրեն կուգան խոնարհաբար:

Երբ Եսթեր թագուհիէն խնդրուեցաւ որ Աստուծոյ ներկայանայ, իր ժողովուրդին կենացը համար խնդրելու. էնի նախ մերժեց, քանզի չկանչուած անոր առջև ելլել մեռնիլ էր, սակայն ի վերջոյ տիղի տուաւ՝ ըսելով, «Գնա՛ դուն Շուշանի մէջ եղող Հրեաները ժողովէ՛, ու ինծի համար ծոմ պահեցէ՛ք, գիշեր ցորեկ երեք օր մի՛ ուտէք և մի՛ խմէք, նոյնպէս ալ ես իմ աղախնանքովս ծոմ կը պահեմ, ու այնպէս թագաւորին առջիւր կ'ելլեմ. թէպէտեւ օրէնքին դէմ է. ու թէ որ մեռնիմ թող մեռնիմ» (Եսթ. Դ. 16):

Աստուծոս (Քսէրքսէս) Հեթանոս թագաւոր մը՝

և անհետեւ ընդհանուր մ'էր: Անոր առջև երթալով՝ թագուհին իր կեանքն իր ախին մէջ առաւ: Սակայն մեր Աստուածը իր գաւազանը մեզի երկնցուցած է. Ան կ'ուզէ որ Իրեն երթանք, ու կը պաղատի որ երթանք. «Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովան, որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր, հապա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի. դարձէ՛ք՝ դարձէ՛ք ձեր չար ճամբաներէն, վասն զի ինչու՞ մեռնիք ո՞վ Իսրայէլի տունը» (Եզեկ. 19. 11), «Եւ Հոգին ու հարսը կ'ըսեն, «Եկո՛ւր. և ան որ կը լսէ՝ թող ըսէ՛, Եկո՛ւր. ու ան որ ծարաւ է՝ թող դա՛յ. ու ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի՛ առնէ» (Յայտ. 18. 17):

Ըսինք թէ Աստուծոյ քով «Թերեւս» չկայ: Յակոբոս կ'ըսէ թէ «Անոր մէջ փոփոխութիւն կամ դառնալու ստուեր չկայ:» Ուստի անոնք որ Իրեն կուգան, կասկածոտ՝ թէ արդեօք պիտի առնեն խնդիրքնին, անհաճոյ կ'ըլլան Անոր, քանզի կը պարսաւեն իր ճշմարտախօսութիւնը: Թէ Աստուած կը վշտանայ տարակուսողին, բացայայտ է Երբայեցուց թուղթին ԺԱ. գլխուն ճրգ համարէն, ու նաև հետեւեալ խօսքերէն. —

«Հապա քե որ ձեզմէ մեկը ինսասութենէ պակաս ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ՝ որ ամենուն առասպելս կուսայ՝ ու չի նախատէր, եւ անոր պիտի տրուի: Միայն քե հաւատքով թող խնդրէ ու չերկնի. քանզի ան որ երկնիս է, ծովուն հողմակոծեալ ու ծաւալեալ ալիքներուն նման է. Ան մարդը թող չխառնէ որ Տերոյմէ քան մը պիտի առնէ» (Յակ. Ա. 5-7):

Այն մարդը որ կը կարծէ թէ «Թերեւս» Աստուած պիտի լսէ իր աղօթքը, կը կարծէ թէ Ան

«Թերեւս» պիտի չլսէ. այդպիսի մէկը չի կրնար հաւատքով խնդրել, դոյզն ինչ երկմտելով, և հետեւապէս ոչինչ չէ կարող առնել: Գալու միակ կերպը՝ համարձակօրէն գալն է: Ուժեղները կը յափշտակեն երկինքի թագաւորութիւնը:

Խորհրդածութիւն մը եւս: Աստուած կը սիրէ որ Իրեն երթանք վստահութեամբ, քանզի ատիցցոյց կուտայ թէ կը հաւատանք Անոր խօսքերուն. ու իր փառքը կախուած է իր խոստմունքներուն կատարումէն: Պօղոս կ'ըսէ, «Բայց Աստուած որ մեծ է ողորմութեամբ՝ իր առատ սիրոյն համար՝ որով մեզ սիրեց, երբոր յանցանքներու մէջ մեռած էինք. մեզ Քրիստոսի հետ կենդանացուց, (դուք չնորհքով փրկուած էք). և Անոր հետ մեզ յարուց, ու Անոր հետ նստեցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս Յիսուսով, որ գալու դարերուն մէջը ցուցնէ իր չնորհքին գերազանց մեծութիւնը՝ Քրիստոս Յիսուսով մեզի ցուցուցած քաղցրութիւնովը» (Եփես. Բ. 4-7): Այսինքն, Աստուած մըտադրած է ցուցադրել զմեզ յաւիտենականութեան ընթացքին մէջ, իբր վկայութիւն իր չնորհքին գերազանց մեծութեանը. փրկուած հոգիներն Անոր անփոփոխ բարութեանն յաւերժական յաղթանալը պիտի ըլլան. ուրեմն ինչպէս կարելի է երեւակայել թէ Ան պիտի չլսէ աղօթքը կոտրած հոգի ունեցողին, որուն հետ կ'ըսէ թէ Ինքը կը հաճի բնակիլ:

Մեղքերէդ դարձի եկե՛ր ես ... կատե՛ս դանոնք, ու կը բաղձա՛ս լաւագոյն կեանքի մը: Խոստովանե՛ր ես յանցանքներդ: Ապա ուրեմն ընդունէ՛ Աստուծոյ խօսքին երախիքն իբր ապացոյց թէ մեղքերդ ներուած են, և թէ իրաւունք ունիս

դուն Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենալու՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը: Այն ատեն
կրնաս ըսել մարգարէին հետ՝ «Ո՛վ Տէր՝ Քեզ պի-
տի օրհնեմ. որ թէև ինձի բարկացած էիր, սակայն
Քու բարկութիւնդ ինձմէ դարձաւ, և զիս մխի-
թարեցիր: Ահա՛ իմ փրկութիւնս Աստուած է. ես
պիտի յուսամ ու պիտի չվախնամ. քանզի իմ դո-
րութիւնս ու օրհնութիւնս Տէր Շնորհաւն է. ու
Անիկա իմ փրկութիւնս եղաւ» (Յս. ԺԲ. 1,2):

ԱԽՈ ՅՈՒՆԱՆԻԱՆԱՆ

1960

ԿՈՐ - ՋՈՒՂՅ



691-2014



ՀՀ Ազգային գրադարան



NL0626981

Տետրակի Ընկերութիւնը կը հրատարակէ Գրիտոնէական գիրքեր, թերթեր եւ տետրակներ աւելի քան 50 լեզուներով: Անգլիերէն, Գերմաներէն, Ֆրանսերէն, Սպաներէն, Հոլանտերէն, Տաւիմարերէն եւ Շուէտերէն գրացուցակները ճոխ են պարունակութեամբ: Նաեւ առատ հրատարակութիւնք կան Ռուսերէն, Փոլոներէն, Պոնէմերէն, Էստոներէն, Լէտոներէն, Հունգարերէն, Իտալերէն, Փորթուկէզերէն, Բուլմաներէն, Հայերէն, Տաճկերէն, Յունարէն, Արաբերէն, եւն. լեզուներով: Գրացուցակներ ծրի կը ղրկուին:

Հասցէ. —

Société de Traités,

Poste Allemande, Boîte 109.

(Turquie)

Galata, Constantinople.

Hambourg, Grindelberg 15a, Allemagne.

Bâle, Nonnenweg 22, Suisse.

Watford, Stanborough Park, Herts, Angleterre.

Christiania, Akersgaden 74, Norvège.

Riga, Kl. Newastr. 12, Russie.

New York City, 32 Union Square East, Etats-Unis.

Washington D. C., Takoma Park Station, Etats-Unis.

Mountain View, Santa Clara Co., California, Etats-Unis.

Ottawa, 173 Second Ave., Ontario, Canada.

Tacubaya, D. F., 1420 Avenida 20, Mexico.

Port of Spain, 31 Dundonald Street, Trinidad.

Sao Bernardo, Estacao S. P. R., Sao Paulo, Brésil.

Buenos Aires, Florida, F. C. R. Argentine.

Santiago, Casilla 43, Correo 3, Chile.

Cape Town, 56 Roeland Street, South-Africa.

Lucknow, Banks Road, Inde.

Singapore, 12 Dhoby Ghaut, Orientale-Inde.

Shanghai, Box 993, U. S. Postal Agency, Chine.

Tokio, 30 Oiwake-cho Hongo-ku, Japon.

Warburton, Victoria, Australie.

Cooranbong, Avondale, N. S. W., Australie.

Uc. 7c

692